ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2026 թ. հունիսի 22-ին կայացած թիվ 15 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2026 թ. հունիսի 22-ի թիվ 15 նիստը անցկացվեց հարցման կարգով: Օրակարգում ներկայացված էր մեկ հարց:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի մարդու ու կենդանիների մորֆոլոգիայի ու ֆիզիոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գևորգ Ավագի Ավագյանի *«Առնետների որոշ ներքին օրգանների հյուսվածաբանական և ֆիզիոլոգիական փոփոխությունների գնահատումը Անդրկովկասյան գյուրզայի թույնի ազդեցության պայմաններում»* թեկնածուական ատենախոսության թեմայի (Գ.00.09 «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» մասնագիտությամբ) վերաձևակերպման նպատակով ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտին միջնորդելու համար հարցը:

Գիտական խորհրդի 32 անդամներից հարցմանը մասնակցել են 25 անդամներ:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի մարդու ու կենդանիների մորֆոլոգիայի ու ֆիզիոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գևորգ Ավագի Ավագյանի «Առնետների որոշ ներքին օրգանների հյուսվածաբանական և ֆիզիոլոգիական փոփոխությունների գնահատումը Անդրկովկասյան գյուրզայի թույնի ազդեցության պայմաններում» թեկնածուական ատենախոսության թեմայի (Գ.00.09 «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» մասնագիտությամբ) վերաձևակերպման նպատակով ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտին միջնորդելու համար հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ. Կ.Ա. Ղազարյանը, մարդու ու կենդանիների մորֆոլոգիայի ու ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Ա.Ֆ. Կարապետյանը: Նշվեց, որ հետազոտության ներկա փուլում՝ աշխատանքի տրամաբանությունից և արդիականությունից ելնելով, առաջարկվում է վերանայել և վերաձևակերպել թեկնածուական ատենախոսության թեման: Գիտական խորհրդի հաստատմանը ներկայացվեց աշխատանքի նոր վերնագիրը՝ Անդրկովկասյան գյուրզայի թույնով ախտահարված կենդանիների հյուսվածաբանական և արյունաբանական փոփոխությունների գնահատումը՝ հակաթույնով և թույնի որոշ բաղադրամասերի ինհիբիտորներով մշակման արդյունքում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ դիմել ԵՊՀ ռեկտորին՝ միջնորդելու ՀՀ ԳԱԱ Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտին՝ հաստատելու Գեորգ Ավագի Ավագյանի «Անդրկովկասյան գյուրզայի թույնով ախտահարված կենդանիների հյուսվածաբանական և արյունաբանական փոփոխությունների գնահատումը՝ հակաթույնով և թույնի որոշ բաղադրամասերի ինհիբիտորներով մշակման արդյունքում» թեկնածուական ատենախոսության վերաձևակերպված թեման՝ Գ.00.09 «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» մասնագիտությամբ:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ՝ Գ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝ Ի.Վ. Շահազիզյան